

ՄԱԿՈՒԻ*

I

Միանքու կամ Կապան-կալէսի.—Երկուան էլ միւնոյն տեղի անուններն են, որ անցեալում ասուում էր. Միանքու պարսկերէն է և նշանակում է երկու քարերի-ապառաժների մէջտեղ, որ հետզետէ աղճատուելով՝ Մակու ասուեց և այսօր էլ յիշտում է այդ անունով. իսկ Կապան-կալէ (պարս. նշանակում է վարազների բերդ) յիշտում էր աւելի հին ժամանակ. այս անունով յիշում է Շահ-Արասը իր մի ստանաւորի մէջ, որ փորագրել է տուել Մակուայ ապառաժի վրայ, Մակուն քանդածու աւերած ժամանակը, հիջրէթի 1052 թւականին. այդ արձանագրութեան մէջ ասուած է. «Կապան-կալէն, որ յայտնի էր ամբողջ աշխարհին, ևս քանդեցի ու կործանեցի...»

Բոլոր հետքերը ցոյց են տալիս, որ Շահ-Արասի ժամանակ այնտեղ տիրող տարրը միայն հայեր են եղել, և հաւանական է, որ Շահ-Արասը ինչպէս Զուղան, այնպէս էլ այդ հրաշալի տեղը քանդեց ու ժողովրդին գերի վարեց **):

Մակուն ընկնում է Պարսկաստանի հիւսիս-արևմտեան ծայրում, փոքր Մասսի հարաւային ստորոտում, Արաքսից արևմուտք, արևելքից դէպէ արևմուտք ուղղութեամբ. իրարից $2\frac{1}{2}$ —3 ժամ հեռաւորութեան վրայ ընթանում են երկու զուգահեռական լեռնաշղթաներ, որոնց արևմտեան ծայրում բացւում է մի մեծ փոսքարածոց, ուր տեղաւորուել է Մակուն. երկու լեռնաշղթ-

*) Համեմատիք «Մակուի» մասին նաև այնցեալ տարուայ «Մուրճի» № 12 տպուած յօդուածը:

Ծ. Խ.

**) Ժողովուրդը գերուելու մասին աւանդաբար պատմում է ներկայումս:

թաները *) տեղ-սեղ կարծես միանում են իրար հետ. միայն բա-
ժանում է նրանց Զանգեմար գետը, որ անցնում է երկուսի
արանքից. այդ կատաղի գետը գարերի ընթացքում կտրտել է
շերտեր ու անդնդային ճանապարհ բաց արած իր համար՝ վա-
զել է ու թափուել Արաքսը:

Սև-սև լաւայի քարերի արանքից երբեմն սպիտակ ու
երբեմն կամրագոյն օձի նման ցոլում է Զանգեմարը, կորչում
է այս ու այն քարի արանքում մտնում է անդունդ կամ քարի
վրայից սողալով՝ շտապելով հեռանում է աչքից:

Քարածայր բերանի երկու կողմը ձգւում են ճնադարեան
բերդի պարիսպները կարմրագոյն քարերով. պարիսպների միջում
տեղ-տեղ ցցւում են սպառաժներ, որոնք կարծես յատկապէս
հանգոյցներ լինեն, որ մի ուրիշ ուղղութիւն են տալիս պարսպին.
պարսպի վերին (հիւսիսային) ծայրերին բացւում են դռներ,
այդ քարէ առաստաղի միջով անցնող ճանապարհի մուտքը:

Մակուտայ քարի միջով են անցնում թաւրիզից դէպի թիւր-
քիա—Բիթլիս, Կարին ու Տրապիզոն գնացող ուղարի կարավան-
ները: Ճանապարհի աջ թերթի վրայ դէպի արևմուտք՝ ճնադարեան
հրաշալիքներից որպէս նմուշ դեռևս մնում է մի քարէ կամուրջ
երկու ապառաժների գլխին տնկուած, որ հազիւ տեսնուում է
ներքեւից (Մակուտից) դիտողին: Քարածոցի ճանապարհից վերև
ապառաժի վրայ փորագրուած կան հայերէն գրեր, որ անմատչե-
լի են կարդալու համար. վերև բարձրանալու և կարդալու համար
թէ միջոցներ և թէ բաւական ծախս է հարկաւոր:

Պատմական ճանապարհի վերն ու վարը հսկայ սար-քարի
ճեղքուածներում կան այրեր, որոնք իրեկ գաղտնի պահարան-
ներ են ծառայել ժամանակի տեղացիներին. այդ այրերից մէկը,
որ այժմ էլ մատչելի է տեղացիներին (մակուեցիներին), մէջն
աղբիւր ունի. այդ այրի բերանից կախ էր ընկած մի շղթայ,
աստիճաններով բարձրանում ու հասնում էին շղթային, որի
օգնութեամբ էլ բարձրանում էին այրի բերանը. մինչև վերջերս
այդ այրը գործ էր ածւում որպէս բանտ Մակուայ խաների ձեռ-
քին. բանտարկեալը մնում էր այդ տեղ ու դիտում էր ներքեւ-
իջնելու կամ փախչելու ճար ու ճամպայ չը կար: Այնտեղ կար
դարերից մնացած աման-չամանի կտորտանք ու մի հատ էլ
երկանք՝ հատիկներ աղալու համար: Այս այրից աւելի բարձր,

*) Հարաւային լինաշղթայի արևմտեան գագաթն (Մակուայ գի-
մաց) ունի հրաբխային բերան, որին տեղացիները կրակ-ընկային են ասում. 500
ոտնաչափ խորութիւն ունի:

դէպի վերե, որ այժմ անմատչելի է բոլորովին, մի ուրիշ ճեղքուածքից արծիւները մօտ ժամանակ այնտեղ կուելիս՝ մի դաշոյն և մի քանի չորփ կտորտանք են ներքև գցել. գուցէ և լինեն այդուեղ շատ հնութիւններ ժամանակին այդ այրերը, որ տեղաւորուում են կ'առես երկնքում բարձրացած քարակազմ կամարի մէջ, ամենքն էլ մատչելի են եղել մարդկանց համար:

Ահա այս բերդն էր, այդ քարէ ճանապարհը, ապառաժի ծոցը մտած ու տեղաւորուած կապան-կալէն էր, որ Շահ-Աքասը քանդեց ու հիմնովին խորտակել տուաւ, որտեղ այդ ժամանակ մնաց միայն քարերի մի ամբողջ կոյտ... և անցնում է մի դար ու էլ աւելի, որտեղ կրկին բնակութիւն լինելու մասին ոչինչ չէ պատմուում, մինչև գալիս ու ոկիզք է առնում Մակուայ խոնութիւնը:

II

Նադիր-Շահի օրերն էր, տաճիկներն ու պարսիկները միշտ կուում էին իրար դէմ, խլում էին Երևանի գաւառն ու Ատրպատականն իրարից: Շահը Թաւրիզումն էր, երբ դեռ տաճիկները տէր էին Մակուայ և Խոյի գաւառներին, երկու կողմն էլ ոչ գոհ և ոչ էլ հաշտ էին իրար հետ, միջոցներ էին հնարում ու մտածում կրկին խլերու երկրներն իրարից. հէնց այս խառնակ ժամանակ Երևանուու ապրող թաթար ըահեաթ կապիկայի աղօախ-կալ Ահմադ-Սուլթանն այս ու այն կողմն է ընկնում, թափառում մի թալան կամ աւաք ձեռք գցելու համար. գալիս է, հասնում Զօրս աւանը, որ զիսաւոր կենարոնատեղին էր Թաւրիզի և Մակուի մէջ. Խոյը այնքան բազմամարդ ու անուանի չէր այդ ժամանակ, որպէս առևտրական քաղաք ճանաչւում էր Զօրսը. Ատրպատականի կարավանն այստեղից էր անցնում ու Մակուից էլ ուղղուած՝ դէպի Թիւրքիա էր գնուում: Զօրսն այժմ էլ 700 տնից բազկացած թրքաբնակ մի գիւղ է Խոյի ու Մակուի մէջտեղը, Խոյից 6 ժամ հեռու: Զօրսում կայ մի հին բերդ, հնաշէն բաղնիսներ և ջրի մի քանի մեծ և փոքր աւազաններ մարմար քարերով շինուած, որոնք այն ժամանակի պարտէզների ու տների պակաս զարդը լրացնում էին: Զօրսը տաճկական մի փոքրիկ քաղաք էր, և կառավարում էր այդտեղ տաճիկ փաշան...

Ահմադ-Սուլթանը թալան չը գտնելով ու մի կողմից տեսնելով տաճիկների շարժումները, իր ծբագիրը փոխում է բոլու-

բովին ու սկսում է հետաքրքրութեամբ հետեւել անցուդարձին. այսպէս սրբապ շրջելիս Զօրսի փողոցներում՝ մի օր աևս նուռ է, որ փաշայի զրան առջև ծառան ձին թամբած ու պատրաստած՝ սպասում է փաշային, որ պէտք է գնար բարնիս. մի ինչ որ գործի պատճառով ծառան ձին յանձնում է Ահմադ-սուլթանին ու ինքն անհետանում է. փաշան իսկոյն դուրս է գալիս, առանց հարց ու փորձի նստում է ձին ու զիմում դէպի բաղնիս. հետեւում է և Ահմէդ-սուլթանը, բաղնիսի զրանն էլի օգնում է փաշային, որ ձիուց իջնում ու ներս է գնում, իսկ Ահմադ-սուլթանը պատրաստի արարական նժոյզը նստած՝ շտապում է դէպի Թաւրիդ ու տեղն ու տեղը տաճիկների անելքի մասին պատմում է Նազիր-Շահին, վերջինս խոստանում է ցանկացածը տալ, եթէ նրա ասածը իրողութիւն լինի... Նազիր-Շահն անմիջապէս ուղարկում է զօրքը Ահմադ-սուլթանի ուղեկցութեամբ և յազթութիւնը տանում է Սյսպէս Ահմադ-սուլթանն իր փափազին է հասնում ինքրելով Մակուն, որ Շահը իսկոյն նուիրում է նրան. Ահմադ-սուլթանը հաւաքում է իր էլլը-բայաթներին ու կամաց-կամաց հաստատում է Մակում մօտ գար ու կէս առաջ, և մինչև այսօր էլ Մակուն մնում է նրա յաջորդների ժառանգութիւն:

Ահմադ-սուլթան-խանին յաջորդեց Հիւսէյն-խանը. դրա օրով Մակուայ մոլլաներից Միհրզա-աղասին սալրազամութեան բախտին արժանացաւ. սրա չնորհիւ էլ բանեց և մակուեցիների բախտը. ժամանակակից Մահմէդ-Շահը չնորհեց մակուեցիներին տանեւչորս զիւղեր. նրանք կամաց-կամաց առաջ գնացին ու տեղ գտան կառավարական շրջաններում, հետզետէ չէնցրին Մակուն ու իր գաւառը. Հիւսէյն-խանը խաղաղ կեանք վարելով մեռաւ, հարատութիւնը թողնելով իր որդուն:

Հիւսէյն-խանին *) յաջորդեց Ալի-խան, որի ժամանակ աւելի ու աւելի հարատացաւ Մակուն. Մակուայ խաները հրապարակ ելան, մեծ-մեծ պաշտօնների զլուխ անցան, իսպահանի, Խորասանի, զանալան քաղաքների ու տեղերի դատաւորներ եղան, զինուորականութեան մէջ մտան, պաշտօններ ստացան. այսպիսով միջոց եղաւ նրանց համար ահագին գումարներ ձեռք բերելու, մինոյն ժամանակ ազդեցութիւն բանեցնելու կառավարութեան վրայ. նրանք կապուեցին զանալան բարձր ընտա-

*) Սրա օրով նորոգուած է և, Թավէի վանքը Սիմէյն եպիսկոպոսի ձեռքով. վանքի շրջապատ պարսպների վերանորոգութեանը նպաստի է և Հիւսէյն-խանը.

Նիքների հետ, կազմակերպեցին իրանց համար տեղական մի զինուորական ոյժ, որ այսօր էլ մնում է, Շահից ստանում են առանձին ծախս ու ոսմիկ դրա համար: Խաները իրանց հաւաքած գումարներով էլ շատ՝ գիւղեր գնեցին, այնպէս որ Մակուայ ամբողջ գաւառին գրեթէ տէր դարձան:

Այլ-խանից յետոյ գալիս է Թէյմուր-խանը, որ յայտնի է ամենքին. Թէյմուր-խանը բաւական ժամանակ մնացել է Թէհրան՝ Շահի զօրագնդի մէջ՝ փոքր պաշտօնով, որտեղ բաւական ուսումնասիրել է ուազմագիտութիւնը: Նա պարսկին յատուկ խորամանկութեան հետ միանգամայն յանդուգն էր ու անվախ, միևնոյն ժամանակ բոլորովին անկրօն, այնպէս որ ոչ մի կերպ նա չէր հաշտում ոչ մոլլայի և ոչ էլ սէյիդների հետ և նրանց ոչ մի գէպքում թոյլ չէր տալիս, որ տեղ բռնեն իր շրջանում, ծիծաղում էր նրանց վրայ ու ծաղրում էր նրանց բոլոր ծիսակատարութիւնները, նա չէր մասնակցում նրանց սուզ ու շիվան օրերին. նա սիրում էր միայն կոփի, թալան, սիրում էր և կտրիճին. միշտ կոփւ էր անում, կոփւներ էր սարգում ու կուեցնում էր սրան ու նրան իրար հետ: Քիւրդ ցեղերին աւելի տեղ տուաւ ու հաւաքեց իր չորս կողմը. այդպէս էլ դրանց միջոցով էր ստանում Տաճկաստանից, Ռուսաստանից և Պարսկաստանից բերած թալանը: Թէյմուր-խանն էր, որ գնաց իր մարդկանցով ու առաջին հարուածը հասցրեց Շէյխ-Իրադուլլահին Ռւրսիի սահմանում: Ռուս-տաճկական պատերազմի ժամանակ նա հանգիստ չը նստեց, շարունակ այս ու այն կողմը գնաց ու մարդիկ ուղարկեց, այսպիսով ոչ միայն թալան ու հարստութիւն բերաւ, այլև մեծ քանակութեամբ զէնքի ու պաշարի տէր դարձաւ. Մակուում էլ ոչ մի մարդ—հայ, քիւրդ, թուրք չէր մնացել, որ հրացան չ'ունենար, ամենքն էլ զինուած ու զինուում էին Մարտենի ու Բերդանի հրացաններով: Այժմ էլ այդ խաների մէջ կարծես այդպիսի մի պահանջ կայ, «ախ, ասում են, ինչո՞ւ չեն կուում ոռւսներն ու տաճիկները, որ մի քիչ հրացան բերենք»:

Թէյմուր-խանը մի պատուհաս էր դարձել ամբողջ տեղական խաների գլխին. ամենքն էլ վախենում էին նրանից. վախենում էր մինչեւ անգամ պարսկի կառավարութիւնը, որ մի գուցէ ապրատամբուկ իր գէմ. Թէյմուր-խանը կարենութիւն չէր տալիս կառավարութեանն ու նրա մամուրներին, որ զանազան պահանջների համար գալիս էին Մակու, դրանց շատերին էր ճանապարհ ցոյց տուել, և ուսանց էլ ծեծելով վերադարձել է յետ: Թէյմուր-խանի օրով աւելի ազատ էր Մակուն ու աւելի հանգիստ, քան թէ այժմ. այդ ժամանակ Թէյմուր-խանն էր մենակ դատաւորը

Մակուի մէջ, բայց այժմ նրա մեռնելուց յետոյ ամենքն էլ դատավորութիւն են անում, ներքին կոիւները շարունակում են անդադար ու միշտ արորում, ճխմբառում են խեղջ բահաւթին *):

Թէյմուր-խանին յաջորդեց Մուրթզա-ղուլի-խանը, ներկայ դատավորը կամ սարդարը, որ իր հօր հակապատկերն է—հիւնդոտ, վերին աստիճանի կասկածոտ ու փոփոխական մէկն է. ամեն տարի ճանապարհորդում է Կովկաս ու հեռու է մնում տեղական ղալմաղալից, իրան վէջիլ դնելով մէկ ուրիշ։ Սրա օրով Մակուի գրութիւնը փոխուեց բոլորովին, Թէյմուր-խանի մեռնելուց յետոյ անմիջապէս՝ կառավարութեան մամուրները ըրդ-բզալով՝ սկսեցին թափուել այստեղ, Մակուայ դատավորութիւնն աճուրդի հանեցին, Մուրթզա-ղուլի-խանից բաւական համեղ պատաճեր ուտելուց յետոյ՝ իր հօր Թէյմուր-խանի տեղը նստեցին։ Պարսիկ կառավարութիւնն այս հանդամանքից շատ ու շատ օգտուեց, Մակուից հանեց ահազին գումարներ ի վրէժ նախորդ տարիների՝ միանգամայն իր ազդեցութիւնը ի ցոյց դնելով այստեղ։

III

Մուրթզա-ղուլի-խանի դատաւոր լինելուց յետոյ սկսուեցին անվերջ խոսվութիւններ, ներքին երկպառակութիւնները սովորական դարձան. պարսից կառավարութիւնն էլ միշտ վառ է պահում նրանց մէջ իր ինտրիգները ու այսպիսով երկու կողմից էլ փող է պոկում. բացի այդ՝ Թէյմուր-խանից յետոյ մակուեցի խաները վարժուեցին սահմանուած տուրքից զատ զանազան փէքեաչներ (նուէրներ) էլ տալ Խոյի դատաւորին, Թաւրիզի դատաւորներին ևայլն։

Հետաքրքրութեան համար այստեղ զնում եմ խաների ստացած որոշ ոռմիկների—ցորենի, փողի ու սահմանուած ամբողջ տուրքերի ցուցակը. միենոյն ժամանակ նրանց պաշտօնապէս ներկայացրած՝ առանձին առանձին, և ամբողջ՝ զիւղերի թիւը.

*Հողագործ, աշխատող դասակարգին Պարսկաստանում առհասարակ բահավաք են ասում։

Մակուայ խանելի ստացած թոշակի և կառավարութեան վճարած տարեկան տուրքի հաշիվը.

Թ ո չ ա կ ն ե ր.

Տ ո ւ ր ք ե ր.

	Ա ն Ռ հ Ե Ս Ե Ռ.	Հինս*) իմալ- վար.	Լիտր.	Պռան.	Գինար.	Գիւղ.	Հինս իմալվար.	Լիտր.	Պռան.	Գինար.
1	Մուրթզա-դուլի-խան (սարդար)	—	—	8360	—	20	317	37	23636	—
2	Արդուլահ-խան	—	—	3666	—	7	672	24	15128	—
3	Մահմադ-փաշա-խան	—	—	—	—	6	103	27	3050	—
4	Ֆարաջուլահ և Խասակուլահ խաներ (որդիներ) . . .	—	—	3600	—	12	53	35	2936	—
5	Իհսակ փաշա	—	—	—	—	4	64	75	4450	—
6	Բալուլ-աղա և Մահմադ-փաշա (որդիք)	—	—	8360	—	18	199	65	12681	—
7	Ասադուլահ-խան	20	—	1800	—	7	189	48	5468	276
8	Ջաքիլ-փաշա	—	—	2500	—	4	207	48	5795	94
9	Իմամ-դուլի-խան	—	—	1000	—	—	—	—	—	—
10	Մի Փօռչի (գունդ գօրքի, 600 հոգու) ծախսերի համար .	66	35	4800	—	—	—	—	—	—
	*) Հինս նշանակում է բերք—ցորեն, գարի, $\frac{1}{2}$ գինարի 100-ը հաւասար է մէկ կոսէկլ, 1000 գինարը արժէ 20 կոպէկ կամ մի դռան:	86	35	34086	—	78	1807	59	73144	370

Յուցակից երեսում է, թէ որքան ողորմելի տուրք են տալիս կառավարութեան, Եազրլան փողըլմաղ (գրուածը չի ջնջուիլ), ասում են իրանք խաները, թէ ինչ ժամանակ է որոշուել այդ տուրքը, և ինչ ժամանակ է եղել, որ միայն 78 դիւզ է ունեցել Մակուն, չը գիտեմ. այժմ ընդհակառակն՝ փոխանակ 78 դիւզերի, Մակուի գիւղերը 300-ից էլ աւելի են, էլ ինչպէս հարուստ չը լինեն խաները. հէնց այսօր Պարսկաստանում՝ կարող եմ ասել, որ ամենահարուստ մարդն է Մուրթզա-ղուլի-խան սարդարը (թէյմուր-խանի որդին). Նա ամեն տարի ահագին քանակութեամբ փողեր է փոխադրում կովկաս և տեղաւորում է բանկերում, նա մեծ եկամուտ ունի և աննշան ծախս. 150-ի չափ սեփական գիւղերի արգիւնքն ստանելուց զատ՝ ստանում է և քրդական աշերէթներից ցեղերից տարեկան խաֆիրը, իսկ զրայից՝ կալուածներից եկած եկամուտ ներն էլ առանձին ունի Երևանում, Նախիջևանում, Խոյում և այլ տեղերում:

Մակուայ գաւառում առհասարակ տասանորդական տուրքը վեր են առնում ըահաթից (զիւղացիներից) 9-ից 3 մաս, շատ քիչ տեղեր պատահում են 9-ից երկու, այն էլ խիստ անընդերի տեղեր. խեղճ գիւղացին յարդից, խոտից էլ ըահրա (տասանորդ) տալուց զատ՝ ստիպուած է փոխադրել այն, որպէս և տասանորդ վերցրած սերմը, ուր որ խանը կամենում է, օլամշից (ձրի աշխատութիւն) զատ, որ գնում է խանի համար առող հանելու, վար ու քաղ անելու, տուն ու պատ շինելու, մշակութիւն անելու, զիւղացին ստիպուած է միաժամանակ պատրաստ ունենալ և պահել իր ձին ու հրացանը՝ խանի հըրամայած տեղը զնալու, թալան բերելու կամ կուելու համար, որ ամեն մի գէպքում սպասում է, նա չէ կարող հեռանալ և հեռու տեղ զնալ. խանը կանչած բոպէին եթէ ներկայ չէ գալնուում, այն ժամանակ ջարման (տուգանք) է տալիս, ծեծւում, մինչեւ անդամ տունն էլ թալանի է տրւում:

Խաներն էլ ցոյցի համար անսպասելի կերպով կանչում, տաշում-բերում են խեղճերին, օրերով պահում, հրացաներ են արձակել տալիս նրանց ու զուրածանում, վարժութիւն-բան չը կայ, հէնց օգի մէջ են պարպում, զինակիր զեղջուկն ստիպուած է հացի պաշարն իր հետ պահել, շատ անգամ օրերով շաբաթներով են սպասում ու քարշ են գալիս այս ու այն կողմ. խաների վէճ ու կոչւն էլ առիթ են տալիս միշտ այսպիսի հաւաքումների, աշխատող զիւղացին բան ու զործը թողած՝ սպասում է նրանց կամայականութիւններին, թէ տեսնես՝ Երբ պիտի բաց թողնեն, որ զնան իրանց տները, խեղճեր, որոնք տանում են թէ

Նեղութիւն, թէ ծախսեր, ուտելիք են առնում ապրում, պաշտպանում են, դրանց և ոչ մէկին էլ չէ մասնակցում խանը *):

Խաներն ամենքն էլ ապրում են Մակրում, թւով 15 տուն, բոլորն էլ մօտիկ ազգականներ են իրար—հօրեղոր որդիներ են. դրանք ոչ մի ժամանակ հաշտ չեն լինում իրար հետ, այսպէս թէ այնպէս կուռում են և մէկը միւսին անպատելու ժամանակ բռնում են խեղճ բահաթին, ծեծում են, բանտարկում են, տուզանքի են ենթարկում. ու այս կերպ փոխաղարձ միւս խանն է անում. մէկը միւսի գիւղացուն զցում է քարի ու սրի արանք, այն ժամանակ են դադարում, երբ տեսնում են, որ երկու կողմից էլ բաւական լիսասուեցին. մէկ էլ տեսնես, որ առօք-փառօք պարսիկ մամուրը եկաւ, այս ու այն կողմը հաշտեցնելու ձեւականութիւններ արաւ, երկու կողմից էլ իր զահմաթ-քիրահնին (նեղութեան վարձ) առած՝ գնաց. հաղիւ դուրս է գալիս նա, որ էլի շարունակում է կոփւր և հասնում այն աստիճան բարդութիւնների, որ առաջն առնել բաւական դժուար է լինում. օրինակ՝ այս տարի սարդարի քրոջ որդի իսադրութահ-խանի և նրա հօրեղբոր որդի Մահմադ և Ասկեար փաշանների մէջ երկպառակութիւն ծագեց. նախ սկսեցին քանդել մէկը միւսին պատկանած արտերը, կտրատել այզիները, ծառերը եացն, առուները քանդել գիւղացիների ելումուաքն արգելել, բացարձակ բռնել, ծեծել և բանտարկել. այս դրութիւնը շարունակուեց գարունքից մինչեւ աշնան վերջերը. սկսեցին հրացաններ պարսկել տների պատուհանների վրայ և ահազին լիսաս հասցնել, խառնուեց և սարդարը **). այրեցին իրար խոտի գէզեր. սարդարը քանդեց հակառակ կողմի կարախաչի ***) ամարանոցները. իւրաքանչիւր խան իր գիւղերից զինուորներ հաւաքեց ու տեղ-տեղ զիրքեր ընտրեց իր համար, օրուայ պարապմունքն էր միայն՝ գիւղեր թալանել, մարզիկ ծեծել, տուն ու տեղ այրել, մի խօսքով աւերեն էր. մի քանի անդամ հակառակ խմբակներն ընդհարուեցին իրար հետ, որտեղ սպանուեցին տասից աւելի քիւրդ ու պարսիկներ. Մէկը բռնեց մի զիւղապետի, ծեծելով մեոցրեց (պարսկի),

*.) Վերջին տարիներս սովորութիւն եղաւ երբեմն-երբեմն քաջակերելու համար օրեկան մի-մի ցամաք հայ և ձիերի համար գարի բաշխել:

**) Մակուայ դատարին սարդար անունն են տալիս, որ երկը տէր ասել է, մի ուրիշ տիտղոսվ իլրալ-սալթանա են ասում:

***) Մակուայ խանների ամարանոցը Մակուի արևմտեան կողմը, 3 ժամ հեռու:

միւսը բռնեց, հակառակ գիւղապետի քիթ ու ականջները կտը-
րեց. Այս դրութեան մէջ էլ իւրաքանչիւր կողմի խաների յա-
տուկ պատրաստած ասպատակախմբերը թալան էին անուն.
ոչխար ու տաւար էին բերում, գիւղում ցորենի ու գարու ամ-
բարներ էին գրաւում, քանդում, աւերում, իրանց ուղածն
անում, գիշեր-ցերեկ պարապ չէին ճանապարհները, խեղճ զիւ-
զացին իր տուն ու տեղը բարձած սայլի, եղան, էշի վրայ՝
փախչում էր այս գիւղը, փախչում էր այն գիւղը և ոչ մի տեղ
ապահովութիւն չէր գտնում. այսպէս շատ գիւղեր՝ տեսնում
էիր՝ տուն-տեղ թողած, գոները բայց, յարդն ու խոար ցրիւ ե-
կած, ամեն բան թափթփած, խառնիխուուն, ոչ մարդ կայ, ոչ
չուն ու կատ ու և ոչ մի անսասուն, այդ տեսարանը միայն մարդուն
սարսափ էր աղդում. վերջապէս էլի մամուրները շտապեցին՝
մեկ, երկու, երեք, ամենքն էլ իրար ետեից. եկաւ թաղաժա-
ռանզի ամենամօտիկ ու աղդեցիկ մարդը, մէկից հարիւր ոսկի
պոկեց, միւսից էլ մի ուրիշ գումար, իրար մօտ տարաւ և՝
«հաշտուեցէք» ասաց ու խուլա-հաֆիզ անելով մեկնեց թաւ-
րիդ. բայց խաները էն է որ տեսան իրար, գէնա օ թաս,
գէնա օ գարազ (նորից նոյն թասը ու սանրը); Արժմ էլի մամուր
կայ Մակւում և սարդարից պահանջումէ հակառակ կողմի գիւ-
զացիների վնասը՝ որ հաշւում են 150,000 թուման (300,000
րուբլի):

Խաները մեծ մասամբ բարոյապէս փչացած մարդիկ են, նը-
րանք որևէ մի տեսակէտից ժողովրդի շահերը աչքի առջև չ'ու-
նեն, և միտիայնիրանց շահն են ճանաչում ու նրա մասին մը-
տածում. պարսկերէն քիչ թէ շատ կարդալ իմանում են, բայց
գրել ոչ, դա յատուկ է միայն միրզալին (զրագրին). միրզան է
կարդում ու զրում նամակներ, իսկ խանը իր կնքով կնքում է.
ստորագրելլ խիստ ամօթ բան է, իրանց ամբողջ կեանքը անց
են կայնում կերուխումով, ներքին զալմաղալով: Շատ անգամ
զնում են կովկաս, Թիֆլիս, Երևան, Բագու, Նախիջնան և այդ
տեղերում հասարակաց տներն այցելելուց յետոյ՝ զինետներին
լաւ ծանօթանում ու կոնծում: Այսպէս թէ այնպէս կրօնի
մասին ոչինչ գաղափար չ'ունեն, բայց որպէս ի ցոյց իրանց ժո-
ղովրդին, սէյիդ ու մոլլային, կրօնական ծխակատարութիւն-
ների ժամանակ խիստ մոլեռանդ են դառնում, նրանց սուզ ու
շիփանի օրերում մասնակցում են խորերին. այս տարի, վերջին՝
զաթիլի, Հիւսէյնի սպանուած օրը ինքը, սարդարն էր դաստա-
բաշին (խմբապետ), նրան հետեւում էր իր հակառակորդ խանը, ու-
րիշները և նրանց հետեւորդները. սարդարը և իր խումբը ոտարորիկ,

սպիտակը շապիկ*) վզերից կախ, սուրը ձեռներին, գլխներին վէրքեր տալով, արխանլուայ, Հասան, Հիւսէյն, շախսէ, վախսէ անելով շրջում էին ցեխոտ փողոցներում: Այսուեղ կրօնական զդացումներով լի, Փէզպամբարի (մարգարէի) անուան շէնիդ (զոհ) լինելու տրամադրութեան տակ՝ որպէս պատրաստ յաւիտենական կեանքը ճամփորդելու, հրապարակաւ հակառակորդ խաները համբուրում են, գրկում են իրար, զնում են իրար տուն, և չես կարող երևակայել, որ որեէ մի թթու խօսք եղած լինի զրանց մէջ. ժողովուրդն ուրախանում է, խաղում ու խնդում է աղաների փոխադարձ համակրանքի ու սիրոյ համար, գէթ սրտանց այն տեսակէտից, որ իրանք վնասների չեն ենթարկելում. բայց արի տես, որ սզի օրերը վերջացան թէ չէ, խաներն սկսում են էլի իրանց սովորական խաղը... և ինչքան ժողովուրդը ապահովուած լինի զրանցից, շատ դէպքում հարստութիւնն ու կեանքը տալուց յետոյ պատիւն էլ է վրայ դնում:

Թողնենք խաներին, միրզաներին էլ իրանց ընկած բաժնում պակաս տեղ չեն թողնում. կաշառք են առնում, գիւղերում տասանորդ հաւաքելու ժամանակ իրանց ցանկացած քէյ-ֆը սարքում են... ծեծում են, կեղերում են, ջարմա են առնում. հերիք է մէկի հետ վատ եղան, առիթ են փնդրում խեղճի ցանքերից եկած արդիւնքը իւրացնելու և լցնում աղայի ամբարը. զանգատը չէ լսւում, ծեծն էլ վրան աւելանում է, «յանցաւոր էր, որ նրա կալը չափել են և լցրել աղայի ամբարը»,» ահա քեղ միակ պատասխանը, որ տրւում է չորս կողմից. խեղճ ժողովուրդը հոդով ու մարմնով, անով ու աեղով միան ապրում է ու աշխատում իր խանի համար—կատարեալ ճորտեր են զրանք:

Խաները որոշ տուրքեր առնելուց զատ՝ արտաքոյ կարգի ծախսեր էլ են հաւաքում ժողովրդից, օրինակ՝ մի մամուր զայ ու զնայ, կամ մի տուգանք տան, խանը պէտք է հաւաքէ այդ պակասը ու մի բան էլ աւելի: Շահին, թագաժառանգին փէշքեաշ (նուէր) են ուղարկում, այդ ծախսին պէտք է մասնակցէ ժողովուրդը, եթէ չ'առնեն հէնց բացարձակ, կը գանձեն ուրիշ դէպքում: Արտասահման զնան իրանց քէյփին, վերադառնալիս ծախսը վեր են առնում սրանից-նրանից. հիւանդ սարդարը Գերմանիա զնաց բժշկուելու, երբ որ վերադարձաւ, որոշ գումարներ հաւաքեց ժողովրդից—պարսիկներից ու քիւրդերից՝ բժիշկներին և ճանապարհներին տուած ծախսերի համար. խա-

*) Գա որպէս պատանք վզերից կախում են՝ յոյց տալու, որ իրանք էլ չառան ու չիւսէյնի համար ճշմարիտ շէնիդներ (զահեր) են:

ների միակ համոզմունքն է, որ սնդուկ մտած փողը դուրս չի գալ, այսպէս էլ ասում են ու նորն են գանձում:

IV

Մակուի գաւառը բաժանւում է մի քանի մահալների (գաւառակների). Խրաքանչիւր գիւղ գնավիս, պէտք է յիշել մահալի անունը և ոչ գիւղի, որ չէ ճանաչում: Ահա այդ մահալները.

Մակու կամ Բայեաթ, Աղգեօլ, Մասիս-կող. Ընկում են բուն Մակուի հիւսիսում: Արեւելքի կողմից՝ Զայփարա, Դարաշամ եւ Գարագոյուն: Հարաւային կողմից՝ Բաբաջուք, Թմամաշէք և Սեօրմանաւա: Արեւուաքի կողմից՝ Աւածուլ և Զարդերուն կամ Զիար-Դիերուն. Գերջին երկու գաւառակները Մակուից անկախ կառավարւում են տարբեր խաների ձեռքով: *)

Սւաջուղի խաները գաղթել են Ալէքսանդրապոլի գաւառից, որոնց ցեղին այրուցիներ են ասում, որ այժմ էլ կայ այդտեղ. գրանք գիմել են առաջ Սուլլուղ—Պարսկաստանի Ռումիի գաւառը. երբ ոռւս-պարսկական պատերազմից յետոյ զալթում են տեղական հայերը, այրաւցիները գիմաւմ են այստեղ և բնակում մօտաւորապէս 70 տարի առաջ: Առաջին խանն էր Խալֆա-Ղուլի-խանը, նրան յաջորդեց Փաշա-խանը, որ այժմ էլ կայ և Սւաջուղի զիսաւոր խանն է, տարիքը 70-ից անց է, բաղդատամբ Մակուի արդի խաների հետ՝ ամենից խելօք ու բարի մարդն է, ոռւս-թիւրքական պատերազմին հիւրընկալել ու պաշտպանել է փախառական հայերին, նամանաւանդ բայազէդիներին:

Զարգերունի (չորս վանքի) գաւառակի խանը քիւրդ է, որին ասիայրերը հին ժամանակ զաղթել են: Հայաստանի Արձէշ գաւառից և մի դարից աւել է, որ հաստատուել են այդտեղ. գրանք պատկանում են հէջարանցի աշերէթ ցեղին. այժմեան ցեղազետը Մուստաֆա-թէյ կամ խանն է: Քիւրդ խաների ու մակուեցիների մէջ կայ մի ներքին որի, նրանք շատ անդամ մեծ ընդհարումներ են ունենում իրար հետ. տաս տարի առաջ թէյմուր-խա-

*) Աւաջուղ հաշում է 35 գիւղ և նոյնքան էլ աւելի 2արգերուն. 2արգերունում են Մակուայ խաների սեփական գիւղերը. ուրեմն այս երկու գաւառները միասին հաշտած, ամբողջ Մակուայ սահմանը, որ բաժանում է Մակուն Խոյից, կը լինեն մօտաւորապէս 400 գիւղեր. գրանց մէջ 10-ի շափ գիւղեր միայն Զանին է, որ յանձնուած են մակուեցիներին, ովի գոլապէն մի ամնչան տուրք է ստանում տարին:

Նը կուեց քիւրդ Տահար-խանի հետ, երկու կողմից հարիւրաւոր մարդիկ սպանուեցին:

Համեմատած միւս խաների հետ՝ քիւրդ խանն աւելի քիչ է ծանրաբեռնուում աշխատող դասակարգի վրայ, թէ որ պէս քիւրդ՝ անհամութիւններ է անուում առնելու տալու մէջ, բայց և այնպէս այնքան չարքաշութեան մէջ չէ զցում ժողովրդին, ինչպէս որ անուում են մակուեցինները, և քիւրդ խանը իր էլաթից (հպատակ քիւրդերից) այնքան տուրք չի առնուում, որքան սարդարն է առնուում, կարելի է ասել՝ կէսը. սարդարը վերցնուում է իր հպատակ քիւրդերից, որոնք 2000 տուն են հաշւում—ջալալցի, մըլանցի եւ բըռուկցի, հարուստ թէ աղքատ տնուորից մանր-մունր ծախսերով (միրզային ևայլն) իւրաքանչիւրից երկու տաճկական ոսկի, անկարոզների բաժինը կիսաւում է հարուստների վրայ, ծախուող ոչխարների համար (որոնք մեծ թւով պահւում են) որպէս զլխահարկ տալիս են 3 շահի³ (երեք կոպ), տալիս են ղալի⁴ (զոմի) վարձ 20—100 թուման տարեկան. տալիս են արօտատեղինների համար էլ որոշ տուրքեր, քաղած խոտերի համար տալիս են տասանորդ, նոյնպէս ոչխարի բըրդից, բացի զանազան փէջքեաշներից—իւղից, պանրից, ոչխարից, զառից և այլն; Բացի այդ՝ մի յատուկ տուրք էլ նրանք տալիս են էլխանայիշն⁵) (աշիրէթի զլխաւորին), որ որոշում է ինքը սարդարը. Էլխանան իշխում է այն վրանարնակ քիւրդերի վրայ, որոնք զարնանը բարձրանուում են եայլաղ—(ամարանոցներ). Էլխանայի կամ էլաղասիի վարձը իւրաքանչիւր չորս տուն մի ոսկի է տալիս, այդ էլ մեծաւ մասամբ սարդարի զըրպանն է մտնում, քիւրդերի մեծ մասը որպէս չորանքեարա (ոչխարներ արածեցնող, պահող) ծառայում են սարդարին:

Այս մարդակեր ու մարդակուլ գաւառում—Մակուում էլ հայերը դիմացել են ու իրանց գոյութիւնը պահել են մինչև այսօր: Շահ-Աբասի աւերութից յետոյ՝ կարելի է ասել, որ ոչ մի ժամանակ էլ հանդիսաւ ու խաղաղ չը մնաց Մակուն: Տաճիկներն ու պարսիկները մի քանի անգամ խլեցին իրարից ու աւերումներ գործեցին. այդ ժամանակ արդի խաների նման յայտնի էին դըմըլլինները⁶), որ տէր էին Զօրսին և Խոյին. սրանց աղաների մէջ էլ պակաս չէին շարունակ թէ ներքին խոռովութիւնները և թէ ընդհարումները. կուում էին զլխաւորապէս իրանց եսը պաշտպանելու և իրարից հողեր խլելու համար: Խոյի այժմեան

^{*)} Էլխանան ընտրում է տեղացի խաներից և ոչ քիւրդ:

^{**) Դըմըլլիններն այժմ էլ կան չայտատանի մի քանի գաւառներում, բայց աննշան թիւ են կազմում:}

բերդն ու խրամատները գըմըլի աղաներից մէկն է շինել՝ իր աղ-
գական Զօրս աւանի գըմըլի յայտնի Թահար-աղայի զէմպաշտ-
պանուելու համար, Դըմըլիները միշտ կուեցին իրար հետ, մին-
չև ջնջուեցին. ջնջեց և ինքը պարսիկ կառավարութիւնը քիւրդե-
րի հետ միացած: Դըմըլիներն այժմ էլ ցրուած կան Մակուի և
Խոյի շրջանում, նրանց թողած յիշատակներից Մակուում մը-
ու պատերն են երեսում:

V

Ամբողջ Մակուի դաւառում որ կողմ՝ որ սարի և քարի մէջ
ման գաս, որ հայի ցրիւ ընկած նմուշների ու յիշատակնե-
րի չը հանդիպես, որոնք տեղ-տեղ հիացում, տեղ-տեղ արդա-
հատանք ու տեղ-տեղ զայրոլիթ են պատճառում: Մենք սկսենք
Աւաջուղից, որ գտնուում է Բայազէղին մօտ, տաճկաց սահմանին
կից, մի փոքրիկ գաշտ, որ այժմ այդ դաշտում և լեռան լանջե-
րում տեղաւորում են 35 գիւղ պարսիկներ (այրումցիներ) 1000
տան չափ: Այդ դաշտ ու լեռների բարձրաւանդակների վրայ
առհասարակ գտնում ես աւերակներ, բերդեր, պարիսպներ, գե-
րեզմանատներ, որոնց չուրջը թափթիած են խաչքարեր և
խաչեր, ձորեր, որ տեղ-տեղ ապառաժների կարավան է կապել մի
ժամհեռուորութեամբ. բայց հին ու նշանաւոր բերդերի աւերակ-
ներից այստեղ այժմեան Քիլիսէ-Քեաննի մէջ մի աւերակ եկե-
ղեցի կայ, թիւ ու թւական չը կալ, աեղացիները քարերի մեծ մասը
փշացրել են՝ յարմարեցնելով իրանց շինութիւններին, ախոռներին
ու գոմերին, եկեղեցին շինուած է սպիտակ փափուկ քարերից, քա-
րերն առհասարակ մեծ դիրքով են կտրտուած ու պատրաստուած,
ամենափոքր քարը մի ոռւսական արշին բարձրութիւն ունի. գը-
րան ճակատի մի քարի երկարութիւնը $4\frac{1}{2}$, բարձրութիւնը $2\frac{1}{2}$
և հաստութիւնը մէկ-մէկ ոռւսական արշին է, հաւանական է, որ
16-երորդ դարու շինութիւն լինի, Աւաջուղը մինչեւ 19-երորդ
դարի սկիզբներն էլ չէն էր, և տեղացիները այնքան հարուստ,
որ նպաստել են սուրբ Թաղէի վանքի նոր շինութեան: Աւա-
ջուղից եկանք Զարդերուն, որ տաճկաց սահմանին կից է.
այստեղ էլ կան քարափոր երկու եկեղեցիներ. դաշտի մէջ
էլ կային երկու վանքեր, որոնք այժմ անհետացել են, կա-
րէնցի թուրքերը իրանց տուն ու տեղն են շինել, չորս
եկեղեցու անունով էլ անուանել են քիւրդերը Զար-Դերուն:
Այս դաշտի մէջ էր սուլթան Սէլիմի և պարսիկների նշանաւոր
կոփէր: Հայոց գերեզմանները դեռ ես երեսում են:

Զարդերունի ու Մակուի մէջտեղն է Բաբաջութ, որտեղ
է Թաղէի հոչակաւոր վանքը. վանքը վերանորոգուած է երկու
ժամանակ, և 16-երորդ դարերում. հին մասը աև քարե-
րով է շինուած Զաքարեա եպիսկոպոսի ձեռքով, իսկ նոր
մասը, որ մարգարէների, առաքեալների, թագաւորների և զա-
նագան տեսակ կենդանիների ու թռչունների քանդակներով է
զարդարուած, շինուած է սպիտակ քարերով էջմիածնեցի Սիմէռն
եպիսկոպոսի ձեռքով 80 տարի առաջ. վանքում որպէս հնու-
թիւն հետաքրքրուելու համար ոչինչ չը կայ, Զաքարեա եպ.՝ի
գրած մի կտոր տեղ կայ եկեղեցու ներսի պատի վրայ, որ
ասում է. «Երկրաշարժից կործանուեց վանքս. և ես ամե-
նազառն ժամանակի մէջ, որ աշխարհն ալան-թալան էր, Աս-
տուծոյ կամօք շնուցի տաճարս և գմբէթս» ևայն; Զաքարեա
եպիսկոպոսի մէկ երկու գրուածներն էլ գտնուում են Մակուալ
ճանապարհի վրայ, ուր նրա անունը միայն կարելի է ջոկել ու
գծուած խաչերը. հաւանական է թւում, ուր Մակուայ քարի
վրայ գտնուած գրուածքն էլ Զաքարեա եպիսկոպոսինը լինի,
գրերը շատ նման են մէկ մէկի, լնչպէս Մակուայ քարի ճակա-
տին է գրուած, նոյնպէս էլ այդ ճանապարհի վրայ գտնուած
երկու հոկայ ապառաժների ճակատներին է գրուած ու խաչը
քանդակուած: Դժբաղդաբար անցեալի մասին որեէ մի խօսք
անգամ չենք գտնուում ալդ հնադարեան վանքի գրքերի քունջ ու
պուճախում: Ձեռագրերի մեծ մասը Խաչիկ վարդապետ Դադեա-
նըն է վերցրել տանելու էջմիածին, դրանց մէջից կարելի էր
մի բան գտնել՝ կարող եմ ասել, որովհետեւ, եթէ չեմ սիսալուում,
Խաչիկ վարդապետը Թաղէի վանքի ձեռագիր գրքերի միջոցով
գտաւ Զուարթնոց եկեղեցին, ուր այսօր պեղումներ է կա-
տարում:

Վանքից հիւսիս՝ մօտիկ՝ երեք հին մատուռներ կան կիսա-
փըլած վիճակում. դրանց մէջ էլ ոչինչ չես գտնում. իսկ դէպի
հարաւ, մի քառորդ ժամ հեռու, դաշտի միջից ցցուած, մի բլրի
վրայ շինուած է սուրբ Սանդուխտի մատուռը, այդտեղ էլ
ոչինչ չը կայ: Վանքին կից՝ համանուն հայ գիւղն է 30 ար-
նուորով, դրանք էլ շատ հին չեն, միշտ փոփոխուել են,
գաղթել են այդտեղ Տաճկաստանից և Պարսկաստանից. պարա-
պում են հողագործութեամբ, ողորմելի վիճակ ու ապրուստ ու-
նեն, շատ անգամ զարէ հացով են ապրում. նրանց հոգերը, որ
վանքի սեփականութիւնն էին, խաները գրաւել ու տուել են գր-
րանց, բոլորն էլ դէմային են. ոչ գպրոց ունեն և ոչ էլ վար-
ժապետ:

Վանքի գիւղի մէջ էլ կայ մի մատուռ, բաւական հին է

երեսում, բայց ոչ ոի գրութիւն չ'ունի: Վահճը միմիայն անունն ունի, ոչ հարսառութիւն ունի, ոչ էլ հնութիւն, ինչպէս երեսում է՝ հազիւ կարողացել է մասամբ իր շինութիւնն ու քարերը պահել այդ մարդակուների մէջ, խաները ամեն մի բանից խարջ ու խուրջ առնելուց յետոյ՝ չէին կարող վահճեց էլ չ'առնել. վահճը կալուածք ամբողջ հողերը զրաւեցին անարգել սուսիկ ու փուսփկ տիրացան. վահճը ցանում է մէկ երկու անջուր արտեր—դէմեր: Սուածուայ զոյզ-զոյզ գութաններն ու սարքը փչացաւ գնաց. այժմ վահճը իր տարուայ ուտելիք հացը հազիւ է ձեռք բերում...

Վահճից գէպի հարաւ կէս ժամ հեռու գտնւում է այժմեան Գրիսբուլաղ^{*)} գիւղը, որ պատկանում է քիւրդ բէյ Մուստաֆա-խանին. երկու տարի առաջ այստեղ 40 տան չափ հայեր կային, բայց նախորդ քիւրդ բէյը տաճկական մի կուի մէջ մեռնելով, խելոյն՝ մօտիկ մակուեցի գիւղացիները թափուեցին Գրիսբուլաղի վրայ, աւարի մատնեցին ու գիւղացիներին հեռացրին. հայերը ստիպուած գաղթեցին Կովկաս ու մի մասը Տաճկաստան, այժմ այդ գիւղը չէնանալու վրայ է, ունի միայն 7 տնուարներ: Գրիսբուլաղը հայոց հին Շաւարչան քաղաքն է, աւերակներ լիքն են, բայց բոլորն էլ զետնին հաւասար. մի քարաշէն եկեղեցի կայ, որ հողից դուրս երևում է, կան կիսածնջուած խաչքարեր, արտեր հերկելիս՝ զմնուում են հողէ և պղնձէ ամաններ. գիւղի վերեր բարձրանում է մի ապառաժ, որի վրայ կարծւում է, որ Սանաարկի բերդն է լինելու. այդտեղ հազիւ նշմարւում են պարսպի խաւեր. երեսում են և ճանապարհի (գէպի բերդը տանող) հետքեր... ուրիշ եկեղեցու նմուշներ էլ են երեսում, որոնք թաղուած են բոլորովին հողի տակ, գերեզմանատան մի մասը երեսում է. քիչ գրուածքներ կան և չեն կարգացւում:

Մակւում հետաքրքրութեան համար արդի հայերը շատ բան չեն տախս մեզ, 700 տուն թուրք ու խաների մէջ ընկել են 70 անուոր հայեր, տաս տունը բերդի մէջ (բուն Մակւում) և 60 տունն էլ բերդից դուրս, $\frac{1}{2}$ ժամ հեռու գէպ արեմուտք—թաղի մէջ, որ յատկապէս էրմանի-մահլասի է տաւում. երկու եկեղեցի ունեն, մէկը բերդում և միւսը թաղում. բերդի եկեղեցին աւելի հին է սուրբ Վարդան անունով. այս տարի

^{*)} Քառասուն աղքիւր ասել է, և իսկապէս քաղցր և անուշ ջրերի աղքիւրներով լիքն է, որոնք տեղաեր առուներ են կապուամ, որոնք հնում տեղական ջրաղացներն էր բանեցնում, բայց այժմ օգտուամ են զրացի գիւղացիք. ամբողջ գէպով գարունքին մարգագետնով ծածկւում է, մաքուր ու զով օդ ունի:

ուստմարան ունեն, ուսուցիչը ճեմարանական վանեցի մէկն է։ Հայերը պարապում են առևտով, զինագործութեամբ, դարբնութեամբ, հիւմն են, որմնազիր, պայտառ, զերձակ ևայլն. շատ են աշխատում, բայց արդիւնքը քամին տանում է, տուածը շատ անգամ չեն կարողանում առնել, այնպէս որ հետզհետէ թուլանում են, հաղիւ իրանք իրանց կառավարում են, տեղական բէժիմը չէ թողնում նրանց հարստանալու, նոյն իսկ յառաջադիմելու։ Մակուից դէպի հիւմն արեմուտք $1\frac{1}{2}$ ժամ հեռու հայաբնակ Գլմիշթափէ գիւղն է. այստեղ էլ հայերը 70 տուն կը լինեն. մի եկեղեցի ունեն, որ գիւղի վերև մի բլրակի վրայ է շինուած. ունեն դպրոց ու վարժապետ. վարժապետը տաճկաստանցի մի տիրացու է, պարապում է գրբացութեամբ, այնպէս որ պարսիկ կանանց համար մի ուխտատեղի է մեր վարժապետի տունը... Այստեղ որպէս հնութիւնոչ մի բան չը կայ, միայն նրանից վերև Փառախոտիկ հայ գիւղն է, ուր աւերակներ կան. դէպի Մակու մի անցք կայ, ուր գտնում է մի ճգնաւորի մատուն ու այրը։ Դեռ չեն են հայոց գերեզմանատունն ու եկեղեցու աւերակները, Մասսի մօտ նոյնպէս։

Մակուի հարաւ արևելքում Արաքսի ափում ձգւում է Դարաշամը. այս անունով կոչւում են Նախավկայի վանքը շրջապատող բոլոր գիւղերը. վանքից $\frac{1}{2}$ ժամ հեռու գէպի արեմուտք ընկնում է հայ Դարաշամ գիւղը, ուր 22 տուն հայեր են, շատ խեղճ վիճակ ունեն, միշտ ծեծում ու թալանում են Վարժագիարի գող աւազակներից. քահանայ չ'ունեն, հոգեոր պէտքերը վանահայրն է հոգում Նախավկայի վանքը համեմատած Թաղէի վանքի հետ՝ շատ լաւ է, բաւական եկամուտներ ունի և պարտքից ազատ է։ Դարաշամ գիւղում գլոր չը կայ, երեխաները վանքից են օգտում։ Դարաշամ հայ գիւղի քարաշէն մեծ եկեղեցին տեղ-տեղ լիւաներ է կրել, շինուած է 16-երրդ դարում։ Դարաշամից շուրջը զըտնուում է 1000-ից աւելի տուն և չորս հատ էլ եկեղեցու աւերակներ։ Այստեղ լի է այծեամներով, որոնք խմբերով ման են գալիս. տեղացիները ամեն ժամանակ որտում են, և միշտ էլ նրա միմն ունենում են։ Դարաշամից դէպ արեմուտք ու հարաւ գետեղերքի հետ շարունակում են կցկտուր աւերակներ աւելի հին և նոր, որ 16-րդ դարում են շինուած. վանքից մինչեւ երեք ժամ հեռաւորութեան վրայ չորս տեղում չորս հատ քարաշէն եկեղեցիներ կան դեռ ևս կանգուն, որ միւնոյն ձեր և միւնոյն ժամանակուայ բաներ են, որոնց մէկը գողերի Վարժագիար գիւղումն է. նոյն եկեղեցու նման կայ Խոլին մօտիկ Մահլազան գիւղում. Խոյում կայ ո. Սարգիս

եկեղեցին. ինչպէս երևում է, 16-րդ դարում հայերը խաղաղ ու ապահով ժամանակներ են անցկացրել, որ առատ-առատ եկեղեցիներ են կառուցել:

Վերջապէս Մակուկի-հայոց այդ Արտադ-Շաւարշան գաւառի անցեալի մասին իմանալու ու հետաքրքրուելու համար պէտք է դիմել այնտեղ թաղուած ու ծածկուած դարաւոր բերդերին, չէնքերին ու աւերակներին, որոնք կարող են տալ մեղ պէտք եղած գոհացումն ու պատմել աւելի հին անցեալի մասին: Մասսի ստորոտները լիքն են աւերակներով:—Արշակաւանի աւերակներում, որտեղ այժմ Տմպատ քրդարնակ գիւղն է, զիտական խուզարկութիւնները շատ բան կը գտնեն: Սակայն Երբ հնարաւոր կը դառնայ այդ...

ՆԺԴԵՀ